12
ՄԱՅԻՍԻ
2023

Luys Լույս®

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՎՃՌՈՐՈՇ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՎՃՌՈՐՈՇ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐԵԻՆ 2

2. ԳՈՐԾՈՂ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ 6

3. ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023թ. մայիսին Թուրքիայում սպասվող ընտրությունները կարող են շրջադարձային նշանակություն ունենալ ոչ միայն Թուրքիայի, այլև ողջ տարածաշրջանի համար, իսկ Հայաստանի համար այն առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում՝ հաշվի առնելով մի շարք գործոններ.

- Նախ, Թուրքիան և Հարավային Կովկասում վերջինիս կցորդ Ադրբեջանը շարունակում են մնալ Հայաստանի ամենամեծ անվտանգային մարտահրավերները:

- Թուրքիայում հնարավոր ներքաղաքական վերադասավորումները շատ կարևոր են հայ-թուրքական ակտիվ շփումների և Անկարայի հետ հարաբերությունները «կարգավորելու»՝ ՀՀ գործող իշխանությունների զիջողական քաղաքականության համատեքստում:

- Կարևոր է, թե ինչպիսին կլինեն մեր տարածաշրջանում Թուրքիայի արտաքին և ռազմական քաղաքականության առանձնահատկությունները մայիսյան ընտրություններից հետո:

- Տարածաշրջանի կայունության տեսանկյունից էական է, թե ինչպիսի բնույթ կկրեն Թուրքիայի հարաբերությունները ՌԴ-ի և Իրանի հետ, ինչպես նաև ձևավորվող կառավարությունը ինչպիսի մարտավարություն կորդեգրի Ադրբեջանի հետ ինտեգրացիայի խորացման հարցում:

- Կարևոր է նաև Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքավորումը, վերջինիս հարաբերությունների հետագա զարգացումը ԵՄ-ի և ԱՄՆ-ի, ինչպես նաև Արաբական երկրների հետ:

Առհասարակ, մայիսի 14-ը Թուրքիայում խորհրդանշական օր է. 1923-ին Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից հետո՝ 1950թ. մայիսի 14-ի ընտրություններն առաջինն էին, երբ հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի հիմնած Ժողովրդահանրապետական կուսակցությունը պարտվեց իսլամամետ Դեմոկրատական կուսակցությանը՝ Էրդողանի քաղաքական և գաղափարական ուսուցչի՝ Ադնան Մենդերեսի գլխավորությամբ[1]:

[1] “Переворот и казнь. Почему Эрдоган вспомнил о Мендересе?”, Станислав Тарасов, ИА REGNUM. 28 мая 2022, https://regnum.ru/news/polit/3603956.html (այցելվել է 12.05.2023թ.), “Erdogan lauds role of former Premier Adnan Menderes”, Anadolu, 16.09.2017, https://www.aa.com.tr/en/politics/erdogan-lauds-role-of-former-premier-adnan-menderes/912053 (այցելվել է 12.05.2023թ.):

Էրդողանը հայտնի է Թուրքիայի Հանրապետության քեմալական՝ աշխարհիկ էությունը վերանայելու և այսպես կոչված «Նոր Թուրքիա», իսկ ավելի կոնկրետ՝ «Էրդողանական Թուրքիա» ստեղծելու նկրտումներով՝ հիմնված իսլամական-պահպանողական և ազգայնական գաղափարների վրա: Մայիսի 14-ին Էրդողանի հաղթանակը, այն էլ Թուրքիայի Հանրապետության հիմնադրման 100-ամյակին ընդառաջ, վերջինիս հնարավորություն կտա վերջնականապես վերահիմաստավորել Թուրքիայի Հանրապետության գաղափարական հենքերը և հաղթող դուրս գալ Աթաթուրքի հետ հեռակա մրցապայքարում:

Այս իրադարձությունները, անշուշտ, իրենց արտացոլումն են գտնելու նաև Թուրքիայի արտաքին և տարածաշրջանային քաղաքականության վրա: Թեև, հաշվի առնելով Թուրքիայի կայացած պետական համակարգը, դժվար է կանխատեսել արտաքին քաղաքականության և ազգային ծրագրերի շոշափելի ռազմավարական վերանայումներ, սակայն շատ կարևոր է հասկանալ, թե կախված ընտրությունների արդյունքներից՝ Թուրքիայի արտաքին և տարածաշրջանային քաղաքականությունը ինչպիսի մարտավարական փոփոխությունների կենթարկվի, ինչն էլ փորձել ենք ուսումնասիրել սույն հոդվածի շրջանակներում՝ հիմնվելով այս հարցում երկու հիմնական թեկնածուների կողմից արդեն իսկ արտահայտված մոտեցումների և ծրագրերի վրա:

1. ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Ինչպես արդեն նշվեց, Թուրքիայում սպասվող խորհրդարանական և նախագահական ընտրությունները ճակատագրական են, թերևս ամենակարևորը՝ 2003ից ի վեր, երբ Էրդողանի կուսակցությունը ստանձնեց Թուրքիայում իշխանությունը: Հաշվի առնելով Թուրքիայի առանցքային դերակատարությունը ինչպես Մեծ Մերձավոր Արևելքում, այնպես էլ առհասարակ միջազգային հարաբերություններում, սպասվող ընտրությունների նկատմամբ մեծ է հետաքրքրությունը՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ մակարդակով[2]: Սա թերևս վերջին 20 տարվա ընթացքում Թուրքիայում միակ նախընտրական շրջափուլն է, երբ կատարյալ անորոշություն է տիրում ինչպես հիմնական թեկնածուների հաղթանակի հնարավորության, այնպես էլ այս կամ այն կողմի հաղթանակի պարագայում Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքական

[2] “2023’s most important election: Turkey”, BY NEKTARIA STAMOULI, POLITICO, APRIL 17, 2023, https://www.politico.eu/article/turkey-2023-election-erdogan-kilicdaroglu/ (այցելվել է 12.05.2023թ.), “Турция и Россия в условиях многополярного мира”, Хасан Унал, Валдай, 01.03.2023 https://ru.valdaiclub.com/a/highlights/turtsiya-i-rossiya-v-usloviyakh-mnogopolyarnogo-mira/?sphrase_id=609968 (այցելվել է 12.05.2023թ.):

կուրսի հավանական փոփոխությունների հարցում: Այնուամենայնիվ, ըստ բոլոր սոցհարցումների և կանխատեսումների՝ նախագահի պաշտոնի համար հիմնական պայքարը ընթանալու է գործող նախագահ Էրդողանի և Ժողովրդահանրապետական կուսակցության առաջնորդ Քեմալ Քըլըչդարօղլուի միջև: Շատ ավելի խճճված են խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ կանխատեսումները[3]:

Այսպես, Էրդողանը և վերջինիս գլխավորած «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, որն այժմ Թուրքիայի խորհրդարանում առաջնորդում է իշխող «Ժողովրդական դաշինք» (Cumhur İttifaki) կոալիցիան, ընտրություններին մասնակցելու է Դևլեթ Բահչելիի առաջնորդած «Ազգայնական շարժում» կուսակցության հետ վերջին տարիներին ավանդական դարձած դաշինքով, որին հարում են ևս մի քանի փոքր կուսակցություններ: Վերջինիս գլխավոր մրցակիցը Քեմալ Քըլըչդարօղլուի գլխավորած «Ազգային դաշինքն» է (Millet İttifakı), որը հայտնի է նաև «Վեցի սեղան» անվամբ՝ հաշվի առնելով դաշինքին մասնակցող 6 կուսակցությունների առաջնորդների մասնակցությամբ կլոր սեղանի շուրջ պարբերաբար անցկացվող հանդիպումները: Դաշինքը ներառում է Քըլըչդարօղլուի առաջնորդած քեմալիստական Ժողովրդահանրապետական կուսակցությունը, ինչպես նաև «Լավ» կուսակցությունը, Թուրքիայի նախկին արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուի ղեկավարած «Ապագա» կուսակցությունը, նախկին ֆինանսների նախարար Ալի Բաբաջանի առաջնորդած «Ժողովրդավարություն և առաջընթաց» կուսակցությունը, «Երջանկություն» և Դեմոկրատական կուսակցությունները: Դաշինքի առանցքային դերակատարներից են նաև Ստամբուլի քաղաքապետ Էքրեմ Իմամօղլուն և Անկարայի քաղաքապետ Մանսուր Յավաշը, ովքեր հավակնում են փոխնախագահների պաշտոնին՝ Քըլըչդարօղլուի հաղթանակի պարագայում:

Բացի այս երկու հիմնական դաշինքներից, որոնց առաջնորդները՝ Էրդողանն ու Քըլըչդարօղլուն, նաև նախագահական մրցապայքարի գլխավոր մրցակիցներն են, ընտրություններին մասնակցում են նաև այլ դաշինքներ և կուսակցություններ: Հարկ է առանձնացնել «Աշխատանքի և ազատության դաշինքը», որը ձևավորվել է քրդամետ «Ժողովրդադեմոկրատական կուսակցության» առանցքի շուրջ և ունի մոտ 10% կայուն ընտրազանգված: Ըստ փորձագիտական գնահատականների՝ այս դաշինքի ընտրազանգվածը կարող է առանցքային դերակատարում ունենալ նախագահական ընտրություններում՝ հատկապես եթե դրանք տեղափոխվեն 2-րդ փուլ: Մյուս դաշինքներն ու կուսակցությունները, ըստ հարցումների,

[3] “2023’s most important election: Turkey”, BY NEKTARIA STAMOULI, POLITICO, APRIL 17, 2023, https://www.politico.eu/article/turkey-2023-election-erdogan-kilicdaroglu/ (այցելվել է 12.05.2023թ.):

համեմատաբար փոքր ընտրազանգված ունեն և դժվար թե ընտրությունների արդյունքի վրա էական ազդեցություն ունենան[4]:

Շատ հակասական են Թուրքիայում նախընտրական սոցհարցումների ցուցանիշները, և կախված հարցումն անցկացնող կազմակերպության քաղաքական, այդ թվում՝ աշխարհաքաղաքական կապերից, արդյունքները հարում են այս կամ այն թեկնածուի օգտին: Այսպես, եթե իշխանամետ որոշ աղբյուրներ և ՀԿ-ներ կանխատեսում են Էդդողանի հաղթանակը[5], ոմանք նույնիսկ ընտրությունների առաջին փուլում, ապա ընդդիմադիր և արևմտյան ՀԿ-ների հարցումների համաձայն՝ Քըլըչդարօղլուն զգալիորեն շրջանցում է Էրդողանին, թեև կարող է չհաղթահարել առաջին փուլով նախատեսված 50%-ի շեմը: Օրինակ, Պոլիտիկոյի հարցումների համաձայն Էրդողանը առաջին փուլում կստանա ձայների շուրջ 45%-ը, իսկ Քըլըչդարօղլուն՝ մինչև 50%-ը: Նույն աղբյուրը երկրորդ փուլում կանխատեսում է Քըլըչդարօղլուի փխրուն հաղթանակը՝ 51/49 տոկոսային հարաբերակցությամբ[6]:



Սույն հոդվածի շրջանակներում չհավակնելով կանխատեսել Թուրքիայում սպասվող նախագահական և խորհրդարանական ընտրությունների արդյունքները՝ կարող ենք միայն ընդգծել, որ անկախ ընտրությունների ընթացքից և

[4] "Турция накануне президентских и парламентских выборов: расклад политических сил в стране", Амур Гаджиев, 14 апреля 2023 https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/turtsiya-nakanune-prezidentskikh-i-parlamentskikh-vyborov-rasklad-politicheskikh-sil-v-strane/?sphrase_id=98216877 (այցելվել է 12.05.2023թ.):
[5] "Anketlerle 14 Mayis Seçimlerine Doğru", TGRT Haber, 12 Mayis 2023 https://www.tgrthaber.com.tr/secim-anketleri (այցելվել է 12.05.2023թ.):
[6] "Turkey - 2023 presidential and general election", Poll of polls, POLITICO, https://www.politico.eu/europe-poll-of-polls/ (այցելվել է 12.05.2023թ.):

արդյունքներից՝ երկու հիմնական հակառակորդների միջև պայքարը աննախադեպ լարված է լինելու և ամենայն հավանականությամբ ընտրություններին հաջորդելու են հետընտրական իրադարձություններն ու լարվածությունը: Նաև այս համատեքստում կարող է էական նշանակություն ունենալ Թուրքիայում սպասվող ընտրությունների աշխարհաքաղաքական համատեքստը, ինչը սովորաբար դառնում է հետընտրական գործընթացների հիմնական շարժիչ ուժը:

Այսպես, Թուրքիայի գործող իշխանությունը Էրդողանի գլխավորությամբ խաղասեղանին դրել է ոչ միայն սեփական քաղաքական ճակատագիրը, այլև այս ընտրություններում լուծում է էքզիստենցիալ խնդիր: Ավելին, Էրդողանի հաղթանակը առաջիկա ընտրություններում վերջինիս հնարավորություն կտա ի վերջո հաղթող դուրս գալ Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքի և նրա գաղափարական հետևորդների հետ կատաղի պայքարում՝ առաջիկա 5 տարիներին ավարտին հասցնելով Թուրքիայի ազգայնական-իսլամական ապագայի շուրջ իր քաղաքական տեսլականը[7]: Ընդդիմության պարտությունը կնշանակի Թուրքիայում միակուսակցական և ավտորիտար համակարգի ամրապնդում՝ Էրդողանին հնարավորություն տալով իր քառորդդարյա կառավարմամբ նոր հետք թողնել Թուրքիայի պատմության մեջ՝ վերահիմաստավորելով Աթաթուրքի ստեղծած թուրքական հանրապետության բովանդակությունը:

Այս է պատճառը, որ կողմերը ամենայն հավանականությամբ այս ընտրություններում պատրաստ են գնալու մինչև վերջ՝ ընդհուպ մինչև փողոցային պայքար և ռազմական հեղաշրջում: Ուշագրավ է, որ ընդդիմության առաջնորդ Քըլըչդարօղլուն փողոցային ակցիաների մեծ փորձ ունի (վերջինիս նույնիսկ երբեմն անվանում են թուրքական Գանդի[8]) և դեռ 2017-ին առաջնորդել է այսպես կոչված «Արդարության երթը», որը ավարտվել է Ստամբուլում հարյուրհազարավորանոց հանրահավաքով: Էրդողանն իր հերթին վերջին 20 տարիներին հաղթահարել է մի շարք քաղաքական մարտահրավերներ՝ փողոցային ակցիաներից մինչև հեղաշրջման փորձ, և ինքն էլ ի վիճակի է Թուրքիայի փողոցները ողողել բազմահազարանոց՝ հիմնականում պահպանողական և ազգայնական զանգվածով: Դրա վառ օրինակն էր մայիսի 7-ին Ստամբուլում անցկացված

[7] «Էրդողանական Թուրքիայի ավտորիտար ուղին և Հայաստանը», «ԼՈՒՅՍ» հիմնադրամ, 3 ապրիլի 2021թ, https://www.luys.am/img/artpic/small/ed7f9722044ad8073adf08-TurkeyErdogan.pdf (այցելվել է 12.05.2023թ.):

[8] "Turkey's 'Gandhi' May Need Lessons From Lincoln", ByBobby Ghosh, April 7, 2023, https://www.bloomberg.com/opinion/articles/2023-04-07/to-beat-erdogan-turkey-s-gandhi-may-need-lessons-from-lincoln (այցելվել է 12.05.2023թ.):

տպավորիչ հանրահավաքը, որին, ըստ Էրդողանի, մասնակցել է շուրջ 1,7 մլն մարդ:

Չնայած, ինչպես արդեն նշվեց, Էրդողանի համար չափազանց կարևոր է վերարտադրվել հենց մայիսի 14-ի ընտրություններին՝ հաշվի առնելով օրվա խորհրդանշական բնույթը, սակայն հնարավոր չէ բացառել նաև նախագահական ընտրությունների 2-րդ փուլը, որը կարող է տեղի ունենալ մայիսի 28-ին: Անկախ Թուրքիայում նախագահական ընտրությունների արդյունքներից՝ քիչ հավանական է դրանց արդյունքում Թուրքիայի արտաքին և անվտանգային ռազմավարության էական վերանայումը, սակայն հաշվի առնելով ներկայումս Թուրքիայի աշխարհաքաղաքական կշիռը միջազգային և տարածաշրջանային հարաբերություններում, վստահաբար կարելի է պնդել, որ Անկարայի քաղաքականության նույնիսկ մարտավարական փոփոխությունները էական ազդեցություն են ունենալու ողջ տարածաշրջանի վրա: Այս իմաստով կարևոր է հասկանալ իշխանության համար պայքարում երկու հիմնական մրցակիցների արտաքին քաղաքական մոտեցումներն ու տեսլականը:

2. ԳՈՐԾՈՂ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Թուրքիայում նախագահական և խորհրդարանական ընտրությունները տեղի են ունենում միջազգային հարաբերություններում աննախադեպ լարվածության համատեքստում, իսկ մյուս կողմից՝ արտաքին և անվտանգային քաղաքականությունը վերջին 20 տարիներին եղել է Թուրքիայի քաղաքական խոսույթի առանցքային ուղղությունը, ինչպես նաև իշխող վերնախավի կողմից ամենաշահարկվող հարցը: Անհնարին է չնկատել, որ Էրդողանի պաշտոնավարման շրջանում Թուրքիայի արտաքին քաղաքական կշիռը շոշափելիորեն մեծացել է ինչպես համաշխարհային քաղաքականության մեջ, այնպես էլ տարածաշրջանային հարցերում: Էրդողանի հավասարակշռված և նախաձեռնողական քաղաքականությունը Արևմուտքի և Արևելքի միջև, հատկապես՝ ուկրաինական հակամարտության համատեքստում, Թուրքիային դարձրել է այսօրվա միջազգային գործընթացների ամենաակտիվ և պահանջված դերակատարներից մեկը[9], ինչը Էրդողանին հնարավորություն է տալիս մեղմել Թուրքիայում առկա մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների բացասական հետևանքները, ինչպես նաև առավելություն ստանալ տարածաշրջանում իր

[9] “Drones and Diplomacy: Will Türkiye’s Elections Change its Middle Power Activism?”, This week on Hold Your Fire!, Richard speaks with Nigar Göksel, Crisis Group’s Türkiye director, 04 APRIL 2023, https://www.crisisgroup.org/europe-central-asia/western-europemediterranean/turkiye/drones-and-diplomacy-will-turkiyes (այցելվել է 12.05.2023թ.):

հիմնական մրցակիցների նկատմամբ՝ աստիճանաբար կյանքի կոչելով իր ռեգիոնալ ամբիցիաները: Անշուշտ, այս իրողությունները չեն անտեսվում նախընտրական քարոզարշավի ժամանակ, և Էրդողանը դրանք հմտորեն օգտագործում է՝ սեփական քաղաքական իմիջը ուռճացնելու նպատակով[10]:

Էրդողանը պարբերաբար ընդգծում է արտաքին քաղաքական հարցերում իր հիմնական մրցակցի թույլ կողմերը՝ փորձելով սեփական հանրությանը համոզել, որ ստեղծված աշխարհաքաղաքական պայմաններում գործող կառավարության քաղաքականությունն այլընտրանք չունի: Թուրքիայի իշխանությունները պարբերաբար մեղադրում են իրենց մրցակիցներին նրանում, թե իբր վերջիններս պաշտպանում են ոչ թե թուրք ժողովրդի, այլ արտաքին ուժերի շահերը, և այս խոսույթը Թուրքիայի ընտրազանգվածի շրջանում ընկալելի է[11]:

Մյուս կողմից՝ Թուրքիայի հասարակության շրջանում Էրդողանի պաշտոնավարման ժամանակահատվածում զգալիորեն մեծացել են հակաարևմտյան և ազգայնական տրամադրությունները: Դրանք հատկապես քաղաքական շահարկումների առիթ դարձան 2016-ին Թուրքիայում հեղաշրջման փորձից հետո, երբ ԱՄՆ-ի աջակցությունը Էրդողանի քաղաքական ախոյանին՝ Ֆեթուլլահ Գյուլենին, ինչպես նաև տարածված տեղեկություններն առ այն, որ ռուսական հատուկ ծառայություններն են նախազգուշացրել Էրդողանին սպասվող հեղաշրջման մասին, հանգեցրին Էրդողանի արտաքին քաղաքական կուրսի զգալի վերանայումների: Վերջին տարիներին Թուրքիայում անցկացվող բոլոր հարցումները ցույց են տալիս Թուրքիայի հասարակության մեծ անվստահությունը Արևմուտքի, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի նկատմամբ[12], ուստի Էրդողանի կողմից Վաշինգտոնի դեմ ուղղված հաճախ կրկնվող քաղաքական դեմարշի փորձերը երկրի ներսում միայն մեծացնում են վերջինիս քաղաքական հեղինակությունը:

Այլ կերպ ասած՝ Էրդողանի կողմից այսօր վարվող «անկախական» քաղաքականությունը և համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքականության ինքնուրույն բևեռ դառնալու նկրտումները վայելում են Թուրքիայի բնակչության մեծ մասի աջակցությունը: Պատահական չէ, որ

---

[10] «Էրդողանյան վարչակարգի՝ որպես միջնորդ դիրքավորումը միջազգային հարաբերություններում», «ԼՈՒՅՍ» հիմնադրամ, 23 նոյեմբերի 2022թ, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=329 (այցելվել է 12.05.2023թ.):

[11] "Турция накануне президентских и парламентских выборов: расклад политических сил в стране", Амур Гаджиев, 14 апреля 2023, https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/turtsiya-nakanune-prezidentskikh-i-parlamentskikh-vyborov-rasklad-politicheskikh-sil-v-strane/ (այցելվել է 12.05.2023թ.):

[12] "Survey Launch: Turkish Perceptions of the European Union 2022", The German Marshall Fund of the United States, Survey Presentation by Kadri Tastan, Apr 15, 2022, https://www.youtube.com/watch?v=BCiY7pqQ6E0 (այցելվել է 12.05.2023թ.):

Թուրքիայում իշխող քաղաքական ուժի նախընտրական քարոզարշավի առանցքային դեմքերից մեկն է դարձել ներքին գործերի նախարար Սուլեյման Սոյլուն, ով պարբերաբար հանդես է գալիս հակաամերիկյան հայտարարություններով՝ Վաշինգտոնին մեղադրելով Թուրքիայի ներքաղաքական գործընթացներին միջամտելու մեջ[13]: Վերջինս թուրքական լրատվամիջոցներից մեկի եթերում նախընտրական քարոզարշավի ժամանակ նույնիսկ հրապարակել է ԱՄՆ նախագահ Բայդենի դեռևս մինչև նախագահ ընտրվելը արած հայտարարությունն առ այն, որ ԱՄՆ-ն պետք է աջակցի Թուրքիայի ընդդիմությանը և «տապալի» Էրդողանին ընտրությունների միջոցով[14]:

Մյուս կողմից թուրքական և միջազգային մամուլում լայն տարածում ստացավ մայիսի 11-ին Քըլըչդարօղլուի գրառումը Թվիթերում, որտեղ վերջինս Ռուսաստանին կոչ էր անում «ձեռքերը հեռու պահել թուրքական պետությունից»՝ ռուսական կողմին մեղադրելով մոնտաժների, դավադրությունների, Deep Fake բովանդակություն ստեղծման մեջ և սպառնալով ընտրություններից հետո վերանայել Ռուսաստանի հետ համագործակցությունը[15]: Այս հայտարարությունները ընդգծում են Թուրքիայի ընտրությունների աշխարհաքաղաքական համատեքստը և ավելի հավանական են դարձնում հետընտրական զարգացումները՝ աշխարհաքաղաքական բևեռների ներգրավվածությամբ:

Հատկանշական է, որ Արևմուտքն իր հերթին չի թաքցնում իր աջակցությունն ու համակրանքը Թուրքիայի ընդդիմության նկատմամբ. առանձնակի մեծ աղմուկ բարձրացրեց Անկարայում ԱՄՆ դեսպան Ջեֆրի Ֆլեյքի հանդիպումը ընդդիմության առաջնորդ Քեմալ Քըլըչդարօղլուի հետ: Անդրադառնալով այդ հանդիպմանը՝ Էրդողանը նշել է, որ իրենք «պետք դաս տան Ամերիկային այս

---

[13] "Turkish interior minister accuses West of election coup attempt", By KRISTINA JOVANOVSKI/THE MEDIA LINE Published: MAY 3, 2023, https://www.jpost.com/middle-east/article-741920 (այցելվել է 12.05.2023թ.):

[14] Soylu: "Biden Darbe Yerine Seçimi İkame Etmiş" | Tv100 Haber, May 4, 2023, https://www.youtube.com/watch?v=9dXeDHOeMIE (այցելվել է 12.05.2023թ.):

[15] "Дорогие русские друзья,
Вы стоите за монтажами, заговорами, контентом Deep Fake и записями, которые вчера были разоблачены в этой стране. Если вы хотите продолжения нашей дружбы после 15 мая, держите руки подальше от турецкого государства. Мы по-прежнему выступаем за сотрудничество и дружбу.", Kemal Kiliçdaroğlu, @kilicdarogluk, Twitter, May 11, 2023, https://twitter.com/kilicdarogluk/status/1656705798557384727?cxt=HHwWroC-xa3J5v0tAAAA (այցելվել է 12.05.2023թ.):

ընտրություններում», և որ ԱՄՆ դեսպանը այլևս չի կարող ակնկալել իր հետ հանդիպում, քանի որ իրենց (նախագահի) «դռները այժմ փակ են նրա առջև»[16]:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ կարելի է ենթադրել, որ վերարտադրվելուց հետո Էրդողանի արտաքին քաղաքականությունը գլոբալ հարցերի շուրջ էական փոփոխությունների չի ենթարկվի, քանի որ մի կողմից՝ խաղալով հակաամերիկյան տրամադրությունների վրա և դրանով իսկ ապահովելով հանրային աջակցություն, մյուս կողմից՝ օգտագործելով Թուրքիայի աշխարհաքաղաքական կշիռը Արևմուտքի հետ հարաբերություններից առավելագույն օգուտ քաղելու նպատակով, Էրդողանը մեծ հաշվով ապահովում է իր երկարակեցությունը Թուրքիայի իշխանության ղեկին: Հավանական է, որ անկախ նախընտրական հայտարարություններից, Էրդողանը վերընտրվելուց հետո կփորձի որոշակիորեն կարգավորել հարաբերությունները ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ՝ այնքանով, որքանով դա թույլ կտա պահպանել առանձնահատուկ հարաբերությունները Ռուսաստանի հետ և տնտեսական համագործակցությունը Չինաստանի հետ:

Օրինակ, արգելակելով Շվեդիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին՝ նախընտրական շրջանում Էրդողանը միանգամից երկու խնդիր է լուծում. մի կողմից՝ ցույց է տալիս Թուրքիայի քաղաքական կշիռն ու առանձնահատուկ «կարևորությունը» ՆԱՏՕ-ի դաշնակիցների շրջանում, մյուս կողմից՝ բավարարում է ազգայնական և հակաարևմտյան ընտրազանգվածի տրամադրությունները: Այսինքն՝ պետք չէ զարմանալ, եթե ընտրություններից կարճ ժամանակ անց Էրդողանը կանաչ լույս վառի ՆԱՏՕ-ին Շվեդիայի անդամակցությանը՝ միանգամից առիթ ստեղծելով արևմուտքի հետ հարաբերությունների որոշակի վերականգնման համար[17]: Ամենայն հավանականությամբ Էրդողանը կշարունակի նաև երկակի քաղաքականությունը Ուկրաինայի ճգնաժամի հարցում՝ մի կողմից՝ ֆորմալ աջակցելով ՆԱՏՕ-ի գործողություններն Ուկրաինայում, մյուս կողմից՝ հանդես գալով միջնորդական ջանքերով և հրաժարվելով միանալ հակառուսական պատժամիջոցներին:

Հաշվի առնելով ինչպես նախընտրական շեշտադրումները, այնպես էլ երկրում առկա տնտեսական խնդիրները, առաջին հերթին՝ լիրայի արժեզրկումը,

[16] "Оценены шансы Эрдогана остаться президентом Турции после выборов", АНДРЕЙ ЯШЛАВСКИЙ, 15.04.2023, https://www.mk.ru/politics/2023/04/15/oceneny-shansy-erdogana-ostatsya-prezidentom-turcii-posle-vyborov.html (այցելվել է 12.05.2023թ.), "Turkey's anti-Erdoğan opposition vows a reset on EU and NATO", BY NEKTARIA STAMOULI, POLITICO, MARCH 15, 2023, https://www.politico.eu/article/turkey-anti-recep-tayyip-erdogan-opposition-reset-eu-nato/ (այցելվել է 12.05.2023թ.):

[17] "THE EU AND TURKEY AFTER THE ELECTIONS: THE START OF A NEW CHAPTER?", Policy brief by Luigi Scazzieri, 29 March 2023, https://www.cer.eu/publications/archive/policy-brief/2023/eu-and-turkey-after-elections-start-new-chapter (այցելվել է 12.05.2023թ.):

աննախադեպ ինֆլյացիան, վերջին երկրաշարժի հետևանքները հաղթահարելու անհրաժեշտությունը, Էրդողանը կփորձի որոշակիորեն կարգավորել հարաբերությունները ԵՄ-ի հետ և վերականգնել հասանելությունը արևմտյան ֆինանսատնտեսական գործիքակազմի նկատմամբ: Սակայն Թուրքիայի տնտեսության համար ինքնասպանություն կլինի հակառուսական պատժամիջոցներին միանալը, ուստի այս հարցում Էրդողանի առանցքային դիրքորոշումը դժվար թե փոփոխության ենթարկվի: Միաժամանակ, ԵՄ կողմից ընդդիմության անվերապահ աջակցությունը կարող է հակառակ արդյունքն ունենալ և հետընտրական, հատկապես՝ սկզբնական, շրջանում հանգեցնել Բրյուսել-Անկարա հարաբերությունների առավել վատթարացման[18]:

Ինչ վերաբերում է տարածաշրջանային քաղաքականությանը, ապա Թուրքիայի գործող իշխանության նախընտրական հռետորաբանությունը մեծ հաշվով չի տարբերվում վերջին տարիներին Էրդողանի վարած արտաքին քաղաքականության տրամաբանությունից: Իհարկե, հագուրդ տալով ազգայնական ընտրազանգվածից առավել շատ քվեներ կորզելու ցանկությանը, հաշվի առնելով այս հարցում Քըլըչդարօղլուի նկատմամբ որոշակի առավելությունը, նախընտրական շրջանում Էրդողանի վարչակազմը առավել ագրեսիվ և ռազմատենչ է դարձրել իր հռետորաբանությունը տարածաշրջանային հարցերում: Հենց այս համատեքստում պետք է դիտարկել Հայաստանի գործող իշխանությունների հետ սկսած հարաբերությունների կարգավորման գործընթացի սառեցումը և Նեմեսիսի արձանի հետ կապված աղմուկը, ինչպես նաև Սիրիայի իշխանությունների հետ հարաբերությունների վերականգնման գործընթացի սառեցումը: Էրդողանի վերարտադրությունը, միևնույնն է, վերջինիս հնարավորություն կտա վերսկսել այս գործընթացները՝ ավելի ուժեղ դիրքերից:

Ինչպես կարելի էր կանխատեսել, հաշվի առնելով նույն ազգայնական զանգվածի տրամադրությունները, Էրդողանի թիմը նախընտրական շրջանում լիարժեքորեն օգտագործում է 44-օրյա պատերազմում Ադրբեջանի տարած հաղթանակի հարցում սեփական դերակատարության հանգամանքը: Այսպես, Էրդողանը նախընտրական զանգվածային միջոցառումների մեկնարկը տվեց Ստամբուլում Ալիևի մասնակցությամբ այսպես կոչված Թեքնոֆեստ (TEKNOFEST) միջոցառման ժամանակ, որտեղ հերթական անգամ ներկայացվում էին Թուրքիայի ռազմարդյունաբերության վերջին տարիների ձեռքերումները, այդ թվում՝ 44-օրյա պատերազմի ժամանակ մեծ աղմուկ բարձրացրած բայրաքթարները: Ալիևի

[18] "THE EU AND TURKEY AFTER THE ELECTIONS: THE START OF A NEW CHAPTER?", Policy brief by Luigi Scazzieri, 29 March 2023, https://www.cer.eu/publications/archive/policy-brief/2023/eu-and-turkey-after-elections-start-new-chapter (այցելվել է 12.05.2023թ.):

մասնակցությունը այդ միջոցառմանը ընդգծում էր առաջիկա ընտրություններում վերջինիս աջակցությունը Էրդողանին[19]:

Հաղթանակից հետո Էրդողանը կշարունակի Հայաստանի հետ սեփական օրակարգով հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ շարունակելով իր քայլերը համաձայնեցնել Ադրբեջանի հետ, միաժամանակ խուսափելով Կովկասի հարցերում Ռուսաստանի հետ բացահայտ հակասությունների մեջ մտնելու հեռանկարից: Էրդողանը, հիմնվելով ազգայնական ընտրազանգվածի տրամադրությունների վրա, կշարունակի իր լիակատար աջակցությունն Ադրբեջանին՝ ինչպես Արցախի վերջնական օկուպացիայի, այնպես էլ այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» հարցում: Միևնույն ժամանակ, կախված աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումներից, կարելի է կանխատեսել Կենտրոնական Ասիայում Թուրքիայի ներգրավվածության մեծացում, այսպես կոչված «միջին միջանցքի» կամ «պանթուրանական միջանցքի» առաջխաղացում և առհասարակ, պանթյուրքական քաղաքականության ակտիվացում:

[19] "President Erdoğan, President Aliyev attend tech event Teknofest", BY DAILY SABAH, ISTANBUL, APR 29, 2023, https://www.dailysabah.com/business/tech/president-erdogan-president-aliyev-attend-tech-event-teknofest (այցելվել է 12.05.2023թ.):

Չնայած ընտրվելու դեպքում Էրդողանը կարող է ժամանակավորապես մեղմել ռազմատենչ հռետորաբանությունը Արևելյան Միջերկրականում Հունաստանի հետ հակամարտության շրջանակներում՝ փորձելով այդ կերպ նպաստավոր պայմաններ ստեղծել ԵՄ հետ երկխոսության վերականգնման համար, սակայն մեծ հաշվով Արևելյան Միջերկրականի, Հունաստանի և Կիպրոսի հետ հարաբերությունների հարցում Թուրքիայի վերջին տարիների քաղաքականությունը ռազմավարական փոփոխությունների չի ենթարկվի: Նույնը վերաբերում է նաև Սիրիայի և Իրաքի հետ հարաբերություններին. Էրդողանը, վերարտադրվելուց հետո դժվար թե հրաժարվի Սիրիայի և Իրաքի հյուսիսում վերջին տարիներին հաստատած իր ռազմական ներկայությունից՝ միաժամանակ փորձելով բարելավել հարաբերություններն այդ երկրների հետ, հիմնվելով փաստացիորեն առկա իրողությունների վրա: Ինչ վերաբերում է Իրանի հետ հարաբերություններին, ապա չնայած այս դարավոր հակառակորդների միջև հավերժ մրցակցությանը, Էրդողանը, օգտագործելով ինչպես անձնական հարաբերությունները, այնպես էլ վերջին տարիներին ձևավորված բազմակողմ հարթակները, կշարունակի խոսափել Իրանի հետ անմիջական բախումից, քանի դեռ դրան չեն նպաստում աշխարհաքաղաքական իրողությունները:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Ինչպես արդեն նշվեց, արտաքին և անվտանգային քաղաքականությունը, ինչպես նաև այս ուղղությամբ վերջին 20 տարիների ընթացքում Թուրքիայի ունեցած ձեռքբերումները Էրդողանի գլխավոր հաղթաթուղթն են առաջիկա ընտրություններում, ուստի պատահական չէ, որ հիմնական ընդդիմությունը, ընդհակառակը, փորձում է նախընտրական քարոզչության շեշտը դնել ներքին խնդիրների և սոցիալ-տնտեսական գործոնների վրա՝ արտաքին քաղաքական հարցերում հրապարակելով միայն հեղհեղուկ և անորոշ ձևակերպումներ[20]: Սա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ Քըլըչդարօղլուի առաջնորդած ընդդիմությունը բազմաշերտ է, այդ թվում՝ արտաքին քաղաքական առաջնահերթությունների տեսանկյունից, ինչը բարդացնում է նախքան ընտրությունները և հիմնական նախարարական պորտֆելների բաշխումը որոշակի

[20] “Усталость от амбиций. Чего ждать России от возможной победы оппозиции в Турции”, Кирилл Кривошеев, 31.03.2023, https://carnegieendowment.org/politika/89433 (այցելվել է 12.05.2023թ.):

հստակ արտաքին քաղաքական ուղենիշների ընդգծումը[21], մանավանդ եթե հաշվի առնենք, որ Թուրքիայի քաղաքական դաշտում Քըլըչդարօղլուն ընկալվում է որպես անցումային դերակատար, որից հիմնական ակնկալիքը Թուրքիայի վերադարձն է դեպի ավելի ժողովրդավար ընթացք[22]: Ինչևէ, նախընտրական հայտարարություններից և ներկայացված ծրագրային դրույթներից կարելի է որոշակի պատկերացում կազմել Թուրքիայի արտաքին քաղաքական առաջնահերթությունների մասին՝ Քըլըչդարօղլուի հաղթանակի պարագայում:

Ընդդիմադիր դաշինքի կողմից այս տարվա հունվարի 30-ին հրապարակված համատեղ հռչակագրում ներկայացված է իշխանության գալու դեպքում երկրի արտաքին քաղաքականության վերաբերյալ ընդդիմության ընդհանուր տեսլականը: Համաձայն այդ փաստաթղթի՝ ընդդիմությունը իր արտաքին քաղաքականությունը պատրաստվում է կառուցել այն ինստիտուցիոնալացնելու, պետության առաջին դեմքից համապատասխան ինստիտուտներին (առաջին հերթին՝ ԱԳՆ-ին) վերապահելու սկզբունքային մոտեցմամբ: Ընդգծվում է արտաքին քաղաքական հարցերում ներքաղաքական հաշվարկների վրա հիմնված գաղափարական մոտեցումներից հրաժարվելու մոտեցումը: Ընդգծվում է նաև հարևան երկրների ներքին գործերին միջամտելուց հրաժարվելու, վերջիններիս տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությանը հարգելու մտադրության մասին, որը նախկին արտգործնախարար Դավութօղլուի հայտնի «Զրո խնդիր հարևանների հետ» այդպես էլ կյանքի չկոչված սկզբունքն է հիշեցնում, և որը վերջնարդյունքում ավելի ագրեսիվ դարձրեց Թուրքիայի արտաքին և տարածաշրջանային քաղաքականությունը[23]:

Փաստաթղթում ընդամենը մեկ դրվագում է հիշատակվում Ուկրաինան, ՌԴ-ն հիշատակվում է 2 դրվագում՝ ընդգծելով, որ վերջինիս հետ պատրաստվում են «հավասար գործընկերային» կարգավիճակով ամրապնդել հարաբերությունները և «հավասարակշռված երկխոսություն ծավալել ինստիտուցիոնալ մակարդակով»: Իհարկե, առկա են ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի հետ հարաբերությունների զարգացման խոստումներ, սակայն ինքնիշխանության պաշտպանության վերապահումով[24]:

---

[21] "Turkey's anti-Erdoğan opposition vows a reset on EU and NATO", BY NEKTARIA STAMOULI, MARCH 15, 2023, https://www.politico.eu/article/turkey-anti-recep-tayyip-erdogan-opposition-reset-eu-nato/ (այցելվել է 12.05.2023թ.):

[22] "What's at stake in Turkey's elections?", PODCAST, Asli Aydintaşbaş and Adrianna Pita, Friday, March 10, 2023, https://www.brookings.edu/podcast-episode/whats-at-stake-in-turkeys-elections/ (այցելվել է 12.05.2023թ.):

[23] "Внешняя политика Турции в контексте президентских выборов: ждать ли перемен?", Александр Васильев, 28.04.2023, https://ru.valdaiclub.com/a/highlights/vneshnyaya-politika-turtsii/ (այցելվել է 12.05.2023թ.):

[24] "Усталость от амбиций. Чего ждать России от возможной победы оппозиции в Турции", Кирилл Кривошеев, 31.03.2023, https://carnegieendowment.org/politika/89433 (այցելվել է 12.05.2023թ.):

Ընդգծվում է ԵՄ անդամակցության ռազմավարական ուղղությունը, F-35 կործանիչների գործարքին վերադառնալու նպատակը.հատկանշական է, որ Քըլըչդարօղլուն իր հրապարակային ելույթներում հավանության չի արժանացրել ռուսական S-400 հակաօդային պաշտպանության համակարգերի ձեռքբերումը, ինչն էլ հանգեցրել է գործարքի չեղարկմանը[25]: ԵՄ հետ հարաբերությունները բարելավելու համատեքստում ընդդիմության ներկայացուցիչները իրենց հրապարակային ելույթներում նաև հաճախ խոստանում են իրագործել ՄԻԵԴ-ի որոշումները և ազատ արձակել Էրդողանի երկու հայտնի հակառակորդներին՝ քրդամետ Ժողովրդադեմոկրատական կուսակցության առաջնորդներից Սելահաթթին Դեմիրթաշին և իրավապաշտպան Օսման Քավալային[26]:

Այսպիսով, ընդդիմությունը ընդունում է Արևմուտքի հետ հարաբերություններում ճգնաժամի առկայությունը և ակնարկում է այն հաղթահարելու իր մտադրությունը: Ընդհանուր առմամբ, ընդդիմության ներկայացրած ծրագիրը նպատակ ունի արժանանալու հասարակության այն հատվածի քվեին, ովքեր ձանձրացել են Էրդողանի ակտիվ արտաքին քաղաքական տատանումներից և կցանկանային, որ Թուրքիայի իշխանությունը անկայուն միջազգային իրավիճակում կենտրոնանար սեփական երկրում առկա խնդիրների հաղթահարման վրա[27]:

Ինչ վերաբերում է տարածաշրջանային հարցերի վերաբերյալ մոտեցումներին, փաստաթղթում նշվում է Սիրիայի հետ հարաբերությունների կարգավորման և սիրիացի փախստականների վերադարձի հարցը կամավորության սկզբունքով լուծելու նպատակի մասին: Քըլըչդարօղլուի ղեկավարած դաշինքը խոստանում է նաև շարունակել ամրապնդել հարաբերությունները Ադրբեջանի հետ՝ միաժամանակ հանձնառություն հայտնելով առաջ տանել հարաբերությունների կարգավորումը Հայաստանի հետ[28]: Միաժամանակ պետք է նկատել, որ Ադրբեջանը չի թաքցնում Էրդողանի

[25] "Турция накануне президентских и парламентских выборов: расклад политических сил в стране", Амур Гаджиев, 14 апреля 2023 https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/turtsiya-nakanune-prezidentskikh-i-parlamentskikh-vyborov-rasklad-politicheskikh-sil-v-strane/?sphrase_id=98216877 (այցելվել է 12.05.2023թ.):

[26] "Turkey's anti-Erdoğan opposition vows a reset on EU and NATO", BY NEKTARIA STAMOULI, POLITICO,
MARCH 15, 2023, https://www.politico.eu/article/turkey-anti-recep-tayyip-erdogan-opposition-reset-eu-nato/ (այցելվել է 12.05.2023թ.):

[27] "Внешняя политика Турции в контексте президентских выборов: ждать ли перемен?", Александр Васильев, 28.04.2023, https://ru.valdaiclub.com/a/highlights/vneshnyaya-politika-turtsii/ (այցելվել է 12.05.2023թ.):

[28] "Turkey's opposition foreign policy promises gradual departure from Erdogan's", al-monitor, Fehim Tastekin, April 15, 2023, https://www.al-monitor.com/originals/2023/04/turkeys-opposition-foreign-policy-promises-gradual-departure-erdogans (այցելվել է 12.05.2023թ.):

նկատմամբ իր նախապատվությունը, ինչը որոշակիորեն տրամաբանական է՝ հաշվի առնելով Էրդողանի և Ալիևի միջև ձևավորված անձնական կապերն ու դրանց հովանու ներքո երկու երկրների միջև վերջին տարիներին աննախադեպ զարգացում ապրող բազմոլորտ համագործակցությունը:

Ուշագրավ է, որ Ադրբեջանի իշխանամետ մամուլում մեծ աղմուկ բարձրացրեց Քըլըչդարօղլուի կողմից մայիսի 7-ին Թվիթերում հրապարակված տեսաուղերձը, որտեղ վերջինս ներկայացնում էր Նոր Մետաքսի ճանապարհի և Արևելք-Արևմուտք միջանցքի իր տեսլականը, որը շրջանցում է Ադրբեջանն ու Հարավային Կովկասը և ենթադրում ուղիղ երկաթուղային կապ Թուրքիայի, Իրանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Ղազախստանի տարածքով դեպի Չինաստան[29]: Այս մոտեցումը, բնականաբար, հակասում է այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» վերաբերյալ Ադրբեջանի պատկերացումներին և հեռահար նպատակներին, ինչպես նաև ի չիք է դարձնում տարածաշրջանային տրանսպորտային հանգույց դառնալու Բաքվի երազանքները՝ այն էլ Իրանի հետ ակնհայտ հակասությունների համատեքստում: Այլ հարց է, թե որքանով են իրատեսական Քըլըչդարօղլուի մոտեցումները՝ հաշվի առնելով վերջինիս արևմտամետ դիրքորոշումը և Արևմուտք-Իրան հարաբերությունների ներկայիս բնույթը:



Իհարկե, Քըլըչդարօղլուի հաղթանակի դեպքում շատ դժվար կլինի իրագործել բոլոր նախընտրական խոստումները արտաքին քաղաքական ուղղությամբ:

[29] "Azerbaijan: Pro-government media attacking Turkish opposition presidential candidate", Eurasianet, May 9, 2023, https://eurasianet.org/azerbaijan-pro-government-media-attacking-turkish-opposition-presidential-candidate (այցելվել է 12.05.2023թ.):

Այսպես, ԵՄ հետ հարաբերությունների խորացման նպատակադրումը կշարունակի սահմանափակված մնալ, օրինակ՝ Կիպրոսի, սիրիացի փախստականների հարցերի շուրջ տարաձայնությունների կամ ՌԴ հետ հարաբերությունների պատճառով: Կպահպանվեն նաև Թուրքիայի տարաձայնությունները ԵՄ անդամ առանձին երկրների, օրինակ՝ Ֆրանսիայի, Հունաստանի հետ: Անկարան կշարունակի համագործակցությունը Մոսկվայի հետ Սիրիայի, Հարավային Կովկասի և մի շարք այլ տարածաշրջանային հարցերի, էներգակիրների և տնտեսության ոլորտում, ինչպես նաև կփորձի պահպանել իր դիրքավորումը՝ որպես չինական «Գոտի և ճանապարհ» նախագծի առանցքային դերակատար, ինչը նույնպես անիրատեսական է դարձնում դեպի Արևմուտք Թուրքիայի կտրուկ շրջադարձի հավանականությունը[30]: Մյուս կողմից՝ դեռ հարց է, թե որքանով է Արևմուտքը, մասնավորապես՝ ԵՄ-ն, պատրաստ նման շրջադարձի՝ հաշվի առնելով, որ ԵՄ-ն արդեն հաշտվել է «չմիացող Թուրքիայի փաստի հետ, որը շեղվել է Եվրոմիության նորմերից և սկզբունքներից և ընթանում է սեփական ճանապարհով»[31]:

Հարկ է նշել, որ ինչպես ընդհանուր քաղաքականությունը, այնպես էլ արտաքին քաղաքական կուրսը Քըլըչդարօղլուի հաղթանակի դեպքում ձևավորվելու է վերջինիս առաջնորդած դաշինքի շրջանակներում կոնսենսուսի միջոցով: Ամենայն հավանականությամբ Քըլըչդարօղլուի կառավարության կազմում արտաքին քաղաքական հարցերում առանցքային դերակատարություն են ունենալու երկու ծանրակշիռ գործիչներ՝ Ադրբեջանում, Իրաքում և Մեծ Բրիտանիայում Թուրքիայի նախկին դեսպան Ունալ Չևիկոզը և Էրդողանի նախկին արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն:

Ընդ որում, նախընտրական քարոզարշավի ժամանակ արտաքին քաղաքական հարցերում առաջին պլանում հայտնվել է հենց Չևիկոզը, ով հանդիսանում է արտաքին քաղաքական հարցերով Քըլըչդարօղլուի գլխավոր խորհրդատուն: Ուշագրավ է, որ վերջինս դեռ ԽՍՀՄ տարիներին իր դիվանագիտական կարիերան սկսել է Մոսկվայում, այնուհետև եղել է Թուրքիայի դեսպանը Անկարայի համար մի շարք առանցքային երկրներում: Ուշագրավ է, որ 2022թ. դեկտեմբերին Մոսկվայում «Պրիմակովյան ընթերցումների» ժամանակ իր ելույթում Չևիկոզը ընդգծել է, որ ընդդիմության հաղթանակի դեպքում Թուրքիան ուղղություն կվերցնի դեպի Եվրոպա և նոր կառավարության հիմնական

[30] "THE EU AND TURKEY AFTER THE ELECTIONS: THE START OF A NEW CHAPTER?", Policy brief by Luigi Scazzieri, 29 March 2023, https://www.cer.eu/publications/archive/policy-brief/2023/eu-and-turkey-after-elections-start-new-chapter (այցելվել է 12.05.2023թ.):

[31] "Запад запаниковал. Куда свернет Турция", РИА Новости, Ренат Абдуллин, 21 апреля 2023, https://ria.ru/amp/20230421/politika-1866314762.html (այցելվել է 12.05.2023թ.):

քաղաքական նպատակը կլինի ԵՄ հետ ինտեգրացիան: Միևնույն ժամանակ, վերջինս ընդգծել է, որ Անկարան կշարունակի ուշադիր հետևել Եվրասիայում տեղի ունեցող իրադարձություններին, ու նույնիսկ չի բացառել, որ ընդդիմությունը կառավարությունը կպաշտպանի Թուրքիան «գազային հանգույց» դարձնելու՝ ՌԴ նախագահի առաջարկը, եթե Եվրոպայում այդ գազը պահանջարկ ունենա[32]:

Խոսելով ՆԱՏՕ-ին Շվեդիայի անդամակցությունն արգելակելու՝ Էրդողանի քաղաքականության մասին՝ Չևիկոզը գործող իշխանություններին քննադատել է երկկողմ խնդիրները միջազգային կազմակերպություն տեղափոխելու և ՆԱՏՕ-ում այլ անդամ երկրների շրջանում բևեռացում առաջացնելու մեջ[33]: Ակնհայտ է, որ ընտրություններում հաղթանակի պարագայում այս հարցում Թուրքիայի վետոն վերացնելը կլինի Քըլըչդարօղլուի առաջին կարևոր արտաքին քաղաքական նախաձեռնություններից մեկը:

Ընդհանուր առմամբ, դժվար է կանխատեսել, որ ընդդիմության հաղթանակի պարագայում Թուրքիայի արտաքին քաղաքականությունը շոշափելի ռազմավարական վերանայումների կենթարկվի: Ավելի հավանական են արտաքին քաղաքական որոշ ուղղություններում մարտավարական փոփոխությունները և վերանայումները, որոնք, սակայն, էական ազդեցություն չեն ունենա ընդհանուր տարածաշրջանում և աշխարհում Թուրքիայի դիրքավորման, ինչպես նաև տարածաշրջանի մյուս երկրների համար Թուրքիայից եկող սպառնալիքների վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անշուշտ, Թուրքիայում տեղի ունեցող ընտրական գործընթացը շատ կարևոր իրադարձություն է, և տարածաշրջանի բոլոր երկրները, իսկ հաշվի առնելով Թուրքիայից մշտապես եկող էքզիստենցիալ սպառնալիքները՝ առաջին հերթին Հայաստանը, պետք է մեծ ուշադրությամբ հետևեն դրա ընթացքին և արդյունքներին: Անկախ Թուրքիայում ընտրությունների արդյունքներից՝ այդ երկրից եկող սպառնալիքները Հայաստանի համար չեն չեզոքացվելու, քանի որ հակահայկական և ազգայնական տրամադրությունները խոր արմատներ ունեն Թուրքիայի հասարակության բոլոր շերտերում, որոնց կարկառուն ներկայացուցիչները ակտիվորեն ներգրավված են ինչպես իշխանության, այնպես

[32] “Турция после Эрдогана: Что изменится в отношениях России с этой страной, если в Анкаре появится новый президен”, Энгин Озер, 15.03.2023, https://www.ng.ru/kartblansh/2023-03-15/3_8680_kb.html (այցելվել է 12.05.2023թ.):

[33] “Turkey’s anti-Erdoğan opposition vows a reset on EU and NATO”, BY NEKTARIA STAMOULI, POLITICO,
MARCH 15, 2023, https://www.politico.eu/article/turkey-anti-recep-tayyip-erdogan-opposition-reset-eu-nato/ (այցելվել է 12.05.2023թ.):

էլ ընդդիմության շարքերում: Այնուամենայնիվ, այդ մարտահրավերներին դիմակայելու տեսանկյունից շատ կարևոր է նաև Թուրքիայի այս կամ այն իշխանության արտաքին քաղաքականության մարտավարական առանձնահատկությունների գնահատումը, ինչը և այս վերլուծության հիմնական նպատակն էր:

Անկախ նախընտրական խոստումներից՝ Թուրքիայի ցանկացած նոր իշխանություն ռազմավարական հարցերում բախվելու է մի կողմից՝ բավական կայացած պետական համակարգի ինստիտուցիոնալ հղկմանը, մյուս կողմից՝ տարածաշրջանային և աշխարհաքաղաքական առկա իրողություններին: Փաստն այն է, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա ազդող երկու հիմնական գործոններն են՝ ընտրազանգվածի տրամադրություններն ու տնտեսական առաջնահերթությունները, որոնք փոխկապակցված են: Որքան էլ ընդդիմությունը եվրոինտեգրման խոստումներ շռայլի, Թուրքիայի տնտեսության ներկայիս կառուցվածքը էականորեն տարբերվում է նախաէրդողանական շրջանի իրողություններից, որոնք էլ հանդիսացել են այդ գործընթացի մեկնարկի հիմնական նախադրյալը[34]:

Այսպես, 2003թ. Թուրքիայի արտաքին առևտրի 60%-ը բաժին էր ընկնում ԵՄ 27 երկրներին, ԱՄՆ-ին և Մեծ Բրիտանիային, իսկ օրինակ՝ ԲՐԻՔՍ-ի, Մերձավոր և Միջին Արևելքի, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի և թյուրքական երկրների հետ առևտուրը միասին կազմում էր Թուրքիայի արտաքին առևտրաշրջանառության ընդամենը 21%-ը: 2022թ. տվյալներով ԵՄ-ի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի հետ Թուրքիայի փոխադարձ առևտրի մասնաբաժինը նվազել է մինչև 40%, մինչդեռ միայն ԲՐԻՔՍ-ի երկրները կազմում են Թուրքիայի արտաքին առևտրաշրջանառության 22%-ը: Եթե վերցնենք 2022-ին Թուրքիայի արտաքին առևտրի մասնաբաժինը ԲՐԻՔՍ-ի, Մերձավոր և Միջին Արևելքի, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի և թյուրքական երկրների հետ, ապա այն կազմում է շուրջ 37% կամ գրեթե նույնքան, ինչ պայմանական Արևմուտքի հետ առևտրի մասնաբաժինը:

[34] "Drones and Diplomacy: Will Türkiye's Elections Change its Middle Power Activism?", This week on Hold Your Fire!, Richard speaks with Nigar Göksel, Crisis Group's Türkiye director, 04 APRIL 2023, https://www.crisisgroup.org/europe-central-asia/western-europemediterranean/turkiye/drones-and-diplomacy-will-turkiyes (այցելվել է 12.05.2023թ.):





35

Ըստ Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի տվյալների՝ միայն ՌԴ հետ առևտրի ծավալները վերջին 20 տարիների ընթացքում տասնապատկվել է, իսկ ՌԴ մասնաբաժինը Թուրքիայի արտաքին առևտրաշրջանառության մեջ այժմ կազմում

[35] "Foreign Trade Statistics", TURKISH STATISTICAL INSTITUTE, 11.05.2023, https://biruni.tuik.gov.tr/disticaretapp/menu_ing.zul (այցելվել է 12.05.2023թ.):

է շուրջ 11%՝ 2003-ի շուրջ 6%-ի փոխարեն: Արտաքին առևտրի տեսանկյունից Ռուսաստանը 2022թ. դրությամբ Թուրքայի ամենախոշոր առևտրատնտեսական գործընկեր երկիրն է, իսկ երկրորդը Չինաստանն է: Սա, իհարկե, ազդում է Թուրքիայի արտաքին քաղաքական առաջնահերթությունների վրա, ինչի հետ պետք է հաշվի նստի ցանկացած նոր իշխանություն[36]:

Վերոհիշյալը, բնականաբար, չի նշանակում, որ Թուրքիայի վարքագիծը անկախ ամեն ինչից կանխատեսելի է, քանի որ քաղաքականության ռազմավարական վերանայումները քիչ հավանական են: Ընդհակառակը, կախված Թուրքիայում առաջիկա ընտրությունների ընթացքից, արդյունքներից և հետընտրական զարգացումներից՝ տարածաշրջանում իր ռազմավարական նպատակներին հասնելու ուղղությամբ Անկարայի վարքագիծը կարող է այս կամ այն անակնկալ դրսևորումն ունենալ: Ինչպես արդեն նշվեց, ընտրապայքարը և հետընտրական փուլը կատաղի են լինելու, ինչը կարող է ինչպես նվազեցնել տարածաշրջանում Թուրքիայի արտաքին քաղաքական և ռազմական ակտիվությունը՝ կենտրոնանալով ներքաղաքական խնդիրների վրա, այնպես էլ ակտիվացնել տարածաշրջանում Անկարայի ռազմատենչ վարքագիծը՝ ներքաղաքական խնդիրները արտաքին գործիքակազմով հօգուտ այս կամ այն ուժին լուծելու նպատակով:

[36] "Foreign Trade Statistics", TURKISH STATISTICAL INSTITUTE, 11.05.2023, https://biruni.tuik.gov.tr/disticaretapp/menu_ing.zul (այցելվել է 12.05.2023թ.):

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*